


ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիտում են ուղղակի
Тифлисе, Редакция «Ммаск».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Աղբիւր» ամսագրի
առիթով: Նամակ Ախալքալաքից: Ներքին լուրեր:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Կ. Պոլսից:
Արտաքին լուրեր:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՔԻՆ: ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ: Հայիւ տեղական հայ մամուլի կա-
թողիկոսական ինդրում կատարած գործերի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԱՂԲԻՒՐ» ԱՄՍԱԳՐԻ ԱՌԻԹՈՎ

«Աղբիւր»-ը ծառայելով իր ծրագրին, ինչպէս
կրթական միջոց ընտրել է բնութիւնն ու կեան-
քը—երկու սեպուհ ֆակտորներ, որոնց ճշգրտ-
ութեամբ հետեւող չի սխալվի, չի չիտնայ: Բարո-
յականութեան, աշխիւ, նուրբ դրացմունքների դա-
սեր է առաջարկում նա, ներկայացնելով իր տա-
նիկների առաջ բնութիւնը, աշխիւ հասարակու-
թեան պիտանի անգամ լինելու համար նա ցոյց
է տալիս նրանց կեանքը: Ի հարկէ պէտք է ըն-
տրել այնպիսի կեանք, որ առաջնորդում է դէպի
մարդկութեան բարձր իղջալը, այնպիսի կեանք,
որ երջանիկ է աշխարհի երեսին, որ մեղմացնում
է դաժնութիւնները, տալիս է մտքի անկախ ոյժ,
սովորեցնում է առաջ: Եւ ինչպէս պէտք է
ներկայացնել բնութիւնը, որ նա կարողանայ աղ-
ղել ընթերցողի մտքին, կարողանայ հաղորդել
նրան իր վեհ ուժերը: Պէտք է նախապէս սիրել
բնութիւնը, որ նրա նկարագրութիւնն էլ սէր ար-
տաշէն, պէտք է ունենալ ձիւր հասկանալ բնու-
թեան սքանչելի երեւոյթները և սրանցից կազմել
մի ներդաշնակ գեղարարական պատկեր, որ հաս-
կացվի դէպքին կերպով, առանց երկմտութեան,
առանց յետին մտքի: «Աղբիւր»-ը մեղ մօտ առա-
ջին օրդանն է, որ հետեւում է այս ուղղութիւն-
ներին: Կարգադէր, օրինակ, «Որդիկ» յօդուածը
(երես 113) և դուր կը հասկանաք, որ այդ յօդ-

ուածով երեսին պիտի ակամայ սիրէ բնութեան
այլանդակ, տեղի արարածները: Քիչ ենք տե-
սել այնպիսի մանուկներ, որոնք դարձուանք,
անասելի երկիւղ են զգում, տեսնելով որ
և է որդ: Քիչ ենք տեսել, թէ որքան վատ են
լինում այդ վախից առաջացած տխուր հետեւա-
քները: Բայց նա, այդ վախը և նրանից առաջա-
ցած վնասները վատ դատարարութեան հետե-
ւանք չէին: Ո՛վ էր սովորացրել սիրով վերաբեր-
վել դէպի բնութեան արարածները և երեսին
չը սիրեց: Եւ ահա այդ յօդուածում այլանդակ
որդը նկարագրվում է սիրուն կերպով, այնպիսի
գոյնով, որ խեղճ կենդանին մասամբ ազատվում
է սաստիկ զրուանքից, նրա տեղի կազմուածքը
կորցնում է իր վատ տպաւորութիւնը, նրա այ-
լանդակութիւնը ներելի դառնում մարդկանց աշ-
քում և գրաւում է դէպի իրան սէր նրանց կող-
մից: Եւ միթէ երեսին, սովորելով սիրել տեղի
որդին, կը հրաժարվի սիրել իր նման մարդուն,
որին բնութիւնը տուել է որ և է արատ, տեղի-
թիւն, այլանդակութիւն: Կարգադէր Հայկուն-
ը մի հասարակ տնային քառ շան պատմութիւն
է: Կարգադէր դուր կը հասկանաք, որ յօդուածի
միտքն է սիրով վերաբերվել դէպի քառ շան և իր
կոյր բնութեան նման կենդանիները, ինչպէս
տանել նրանց վրա: Սիրելով մի այսպիսի արա-
քանկութիւն է գործում: Ահա ինչով է լաւ բնութեան
խելացի ուսումնասիրութիւնը: Եւ այդ տեսակ
յօդուածներ փառաւոր անկիւն պիտի բռնեն մա-
կական գրականութեան մէջ:

Մի անըմբռնելի սէր է ծնում մարդու մէջ
դէպի բնութիւնը, երբ նա աւելի մօտակից ծանո-
թանում է նրա հրաշքներին, գեղեցկութիւններին
հետ, երբ մտնում է նրա սփերայի, նրա հրաշա-
քործ ոյժի մէջ: Մարդկային հոգու պատկերը ա-
ւելի լաւ է մերկանում բնութեան առաջ, նրա

գեղեցիկ ու ահաւոր տեսարաններին ու հարստու-
թիւններին առաջ մարդը ցոյց է տալիս իր իստակ
ողու իսկական գրութիւնը: Այստեղ ոչինչ արհես-
տական, ոչինչ մտածածին լաւ չէ կարող լինել:
Բացի դրանցից բնութեան նկարագրութիւնները
ունեն անշնչելի թարմացող բնաւորութիւն, տա-
լիս են ամեն մէկին զուարճալի, դիւրիմաց ըն-
թերցանութեան ախորժիկի նիւթ: Եւ ճանապար-
հորդական գրութեանը միշտ պիտի օգտակար
լինեն ոչ միայն երեսիններին, այլ և ամեն դասար-
գի մարդկանց համար: Եւ «Ջրաբերդ» յօդուածը,
վերցրած պ. Բաֆֆիի ճանապարհորդութիւնից
Ղարաբաղում, իսկապէս գեղեցիկ և զբաւ-
ղիչ է: Գարգելի հեղինակի ոճը նրբութեան և գեղար-
ւեստի կողմից ուրիշ ոչինչ սպասելի տեղ չէ թող-
նում: Ընթերցողը նրա հետ գտնում է, պատում է
նրա հետ, տեսնում է ամեն ինչը, և հոգեպէս աղ-
բամարտում է այնպէս, ինչպէս և է ճանապարհորդը:
Նոյնպէս բաւական լաւ է պ. Կ. Մէլիք-Շահնազա-
րեանցի «Պանդուխտի Յիշատակարանից» անունով
յօդուածը, առհասարակ պ. Մէլիք-Շահնազարեան-
ցի ոճը նոյնպէս գեղեցիկ է և բոլորովին յարմար
մանկական գրութիւններին համար: Տեսնել մեր եր-
կիրը, մեր հայրենիքը, սեփական կեանքը ամփոփ-
ված գեղարուեստական գեղեցիկ նկարագրութիւն-
ների մէջ մեր առջեւ—դա մի շատ տեսչալի
ցանկութիւն է: Ուստի շատ ուրախ կը լինէինք,
եթէ «Ջրաբերդ»-ի, նոյնպէս և «Պանդուխտի
Յիշատակարանի» նման նկարագրական շարադ-
րութիւններ շուտ շուտ երևային «Աղբիւր»-ի էջե-
րում: Հաւատարմութեամբ, որ դրանով աւելի կը
բարձրանար ամսագրի արժողութիւնը:

«Աղբիւր»-ը նշանակված լինելով երեսինների
համար և իր դիրքով կարող լինելով տալ միայն
թեթիւ ընթերցանութեան նիւթեր, քանի մի ան-
գամ մտաւնալով իր չափը, ընկել է այնպիսի
բաների ետեւից, որոնք նրա չափին համեմատ
բեռն չեն: Մենք կամենում ենք ասել, որ թեթիւ
ընթերցանութեան նիւթ տալով ամսագրի աւելի

շատ առաջ կը գնայ, քան բեռնակրով այնպիսի
յօդուածներով, ինչպէս են մի քանի հեքիաթներ:
Հեքիաթներ տալով են մանկական թերթում
ստիկ այն պատճառով, որ փոքրիկ ընթերցողը
ծանօթանայ իր ազգի մտաւորական կեանքի, իր
ժողովրդի ոգու հետ, դուրս բերելով դրանցից և
բարոյական խրատներ: Հեքիաթներին դաստիար-
ակութեան գործի մէջ մենք տալիս ենք երկրոր-
դական նշանակութիւն: Ուստի կանգնում ենք
այն կէտի վրա, որ հարկաւոր չէ երեսինների ուղիղ
երկար գրադեցնել այնպիսի բաներով, որ չեն
կանգնած թէպակաւ հոգի վրա:

(Կը շարունակվի)

ՆԱՍՏԱԿ ԱՌԱՎԱՐԱՔԻՑ

Ապրիլին 4-ին

Մեր պապերը՝ մարդկային բարեկեցութեան
հիմունքն էին համարում արհեստն ու անտեսա-
կանութիւնը: «Արհեստը ոսկի ապարանջան է, ա-
ստու էլին նրանք, արհեստաւորը ոչ մի ժամանակ
քաղցած չի մնալ, նա միշտ հաց էլ ձմրէ իր ու-
կի ապարանջանով—արհեստով»: Եւ արդարեւ, մինչ-
դեռ վաճառականը պէտք ունի դրամագլխի, ա-
ռանց որի անկարելի է նրան գործ անել, մինչդեռ
նա իրականում անուրբ կեանքի այս կամ այն ձախող
պատճառով նաւաբեկութեան, հրդեհի, յալիշտա-
կութեան պատճառով ամենակարճ միջոցում զըր-
կվել իր բոլոր ունեցածից, արհեստաւորը, ընդ-
հակառակն, ապահովված է այդ տեսակ պատա-
հարներէր, որովհետեւ նրա հարստութիւնը նիւ-
թական առարկաների մէջ չէ բուխնալով:
Խոստովանվելով հանդերձ մեր նախնեաց դատո-
ղութեան ճշգրտութեամբ արհեստներին վերաբերու-
թեամբ առհասարակ, մենք այսօր դժբաղդաբար
տեսնում ենք որ «ոսկի ապարանջանը» գրեթէ բո-
լորովին կորցրել է իր արժէքը, այսօր հազուա-
դէպ չէ տեսնել մի արհեստաւորի, որ 3—4 ար-
հեստների տեղեկն է միանգամայն, բայց և այն-

սիրելին, իր մեծ մարդուն: Նրբաշնան իր ժո-
ղովրդի սրտով չէ, նրան սիրելի չէ, ժողովուրդը
առնուազն դարձնում է ս, եկեղեցի յաճախելուց,
երբ կաթողիկոսը ազգի սրտով չէ լինի, նրա անծա-
նօթ կամ անհասցի մէկն լինի, ազգը միթէ չի դար-
ձնի երեսը և չի մոռանալ իսպառ. Հայաստանեայց
ս, եկեղեցին: Ի՜նչ կասեն արան պ, պ, Սիմեո-
նեան և Սպանդարեան, Հայաստանեայց եկեղեցւոյ
այդ ամենաշնորհաւոր պաշտպանները:—Որքան
շուտ մոռացանք, պարոններ, ձեր ստանձնած դերը:
Ի՜նչ, խաղաղութեան ժամանակ կեղծաւորութեամբ
պաշտպան հանդիսացաք և պոռոտախօսութեամբ
պաշտպանեցիք այդ եկեղեցւոյ շահերը, որպէս զի
նրա երկունքի ժամանակ աւելի հեշտութեամբ կարո-
ղանաք դաւաճանել այդ եկեղեցւոյ: Տանը սպասա-
ւոր եղաք՝ տանտիրոջ հեշտութեամբ կողոպտելու
համար: Բայց սպասեցեք, ձեր ձախտը դափնիով
ստակող ազգը կը դրոշմէ այդ ձախտը ըստ ար-
ժանյն նաեւ թուրով:—Բայց դեռ շարունակեմ
խօսքս:

Ոչ մի մարդ ի հարկէ դերձ չէ թերութիւններից,
վատնորդ և կաթող. ընտրութեան համար չէ կա-
րելի դանակ մի ամենակատարեալ անձնաւորու-
թիւն, բայց գոնէ պէտք է ընտրել այնպիսի անձը,
որ երկար տարիներ վարած լինելով նշանաւոր ե-
կեղեցական և վարչական պաշտօններ, հանդիպած
լինի ճշմարտանքի, ծանր հանգամանքների, դժուա-
րութիւնների, անյաշողութիւնների, այնպէս որ
այդ բոլոր դէպքերում առիթ լինի ներկայացած
նրան ցոյց տալ իր արժանեաց չափը, կարողութիւնը,
քաւորութիւնը և անձնութեանը, ինչպէս նաեւ
իր բոլոր թերութիւնները և թուլութիւնները:
Ահա այսպիսի լաւ փորձված անձինքներից պէտք
է ընտրել նրան կաթողիկոս, որը ծանօթ է շատ
արժանաւորութիւններով և քիչ թերութիւննե-
րով:

Բացի միւս արժանաւորութիւններից նաեւ այս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՇԻԻ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ԽՆԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԵՐԻ

«Մեր տեղական հայ մամուլին մնում է միայն
իր կատարած գործերի հաշիւն տալու»: Այս խօս-
քով «Նոր-Դար» լրագրի իր № 58 հրաւէր է
կարգում տեղական մամուլին կաթողիկոսական
ինդրում կատարած գործերի և բռնած դիրքի հա-
մար հաշիւ տալու:

Իբրեւ պարզ ընթերցող, բայց լաւ հետամուտ ե-
ղած լինելով կաթողիկոսական ինդրում հայ մա-
մուլին, թող ներքի ինձ հրատարակել մի հաշիւ, թէ
կաթողիկոսական նշանաւոր ինդրում ինչ
գործ կատարեցին և ինչպէս վերաբերվեցին տեղա-
կան լրագիրները, մանաւանդ նրանցից երկուսը՝
«Նոր-Դար» և «Մեղուն»: Որովհետեւ այդ թեր-
թերը միայն կարող են մի ընդհանուր պարզ հա-
շիւի ենթարկվել, պատճառ. որ իրենց բազմաբա-
նութեամբ, երկարաբանութեամբ, գեղծաւորով
և սովորեցնողութեամբ այնպէս են խճճել և խառնել
ինդրը, որ առանց հաշիւի և հաշուէլիքի անկա-
րելի է թողնել նրանց սխալագործութիւնները:

Ինչ վերաբերում է «Մեղուն» և «Արձագանք»
լրագիրներին, նրանք միայն ազգի ճշմարիտ թար-
ման և արձագանք են եղել և ներկայացրել են
նրա հոծ մեծամասնութեան բաղձանքը, վատնորդ
հաշիւը պարզ է և հասկանալի:

Հայ ազգը դեռ լրագիրների առաջարկած կա-
թողիկոսական ընտրելիների համար ոչինչ չէր լը-
սած, դեռ չը գիտէր թէ որ հրապարակախօս
հոմ է առաջարկելու իբրեւ յարմար կաթողիկոսա-
ցու, նա, ազգը ինքը, վճռել էր և կամենում էր
տեսնել կաթող. թափուր դահի վրա Ներսէս պատ-

րիւրըն կամ Խրիմեան հայրիկին, բացի նրանցից՝
ազգի մեծամասնութիւնը ուրիշին չէր ճանաչում
և պէտք էլ չէր զգում ճանաչելու, քանի որ Ներ-
սէս և Խրիմեան կանգնում են: Այսօր ազգը, ի
բայց առեալ այն մարդկանց, որոնց առաջնորդն է
լինեց կիբըր ու շահը և նրանց հետեւող այն փոք-
րաթիւ միաբնո խումբը, որոնք չունեն սեփական
համոզմունք, դատելու և քննելու համար սեպա-
կան կարծիք և միշտ նայում են ուրիշի աչքերով,
որ տեսնեն թէ «ինչ կերպով պարոն Օսանն է դա-
տում»: Այդ Օսաններին մի կողմը թողնելով կը
տեսնենք, որ ամբողջ ազգը Գանգէսի ափերից
մինչև Բիւզանդիայի ափերը և Նիկայի եղեգները
մինչև Եփեսոսի բուրգերը միաձայն կոչում են,
որ իրենց առաջին կաթողիկոսական ընտրելին է
Ներսէս Վարժապետեանը: Այսօր ոչ մի հակառա-
կորդ չի յանդգնի մերժել այս խօսքերի ճշմար-
տութիւնը, ամենուրեք կատարված պատգամաւոր-
ների ընտրութիւնը, տաճկահայերի եկեղեցական և
ազգային ժողովների քուէարկութիւնը պարզ ապա-
ցոյց են դրան:

«Մշակ» և «Արձագանք» լրագիրները ուսումնա-
սիրած լինելով ազգի կարիքը, ցանկութիւնը և արա-
մազրութիւնը, յետ առողջ խորհրդածութեան,
ի նկատի ունենալով ապագայ կաթողիկոսի գոր-
ծունեութեան շրջանը, ազգի հետ ունենալիք յա-
րաբերութիւնը և նրա նշանաւոր դիրքը, արդարու-
թեամբ և ճշմարտութեամբ առաջարկեցին իբրեւ
ամենապարմար ընտրելին ա. Ներսէս պատ-
րիւրըն և բ. Խրիմեան Հայրիկին:

Թէ որքան օրինաւոր է և ամենապարմար Ներ-
սէս պատրիարքին իբրեւ առաջին և Խրիմեան Հայ-
րիկին իբրեւ կաթողիկոսական երկրորդ ընտրելի հա-
մարելը, դրա մէջ կը համոզվի ամեն մարդ, եթէ
նա ընդունակ է աշխարհութեամբ, անաշուտութեամբ
և առանց կրքերի արքունութեան քննել, համեմա-
տել և դատել, որովհետեւ բացի այն բոլոր արժա-

նաւորութիւններից և բարոյամասնութիւններից, որ
անհրաժեշտ են համարում ընտրելի կաթողիկոսի
համար և որոնց համար շատ գրեցին ու թեցին
հրապարակագիրները և ի նկատի ունեն ընտրող-
ները, ցանկալի էր որ արժանաւոր ընտրելիներից
ամենապարմար սեպվէր այն անձը, որը համա-
պատասխանում է նաեւ հետեւեալ երկու պայման-
ներին.

ա. Ունենար մեծ ժողովրդականութիւն ազգի
մէջ և վայելէր նրա սերը. բ. լաւ փորձված անձն
լինելով՝ քաջ ծանօթ լինէր ընդհանուր ազգին թէ
իր բոլոր արժանաւորութեամբը և թէ ունեցած
թերութեամբը:
Քանի որ հայ ազգը չունի քաղաքական կենտ-
րոն, միութիւն և նա՝ ցրված լինելով ամենայն
տեղ՝ միայն եկեղեցւոյ միջոցով է, որ միութեան կապ
է պահպանվում ազգի մէջ, մանաւանդ որ եկեղե-
ցական իշխանութիւնն է կառավարում ազգային
դատարարականութեան գործը և որովհետեւ այդ բո-
լորը կառավարվում է և տնօրինվում առանց
պարտաւորեցուցիչ օրէնքների, այնպէս որ միայն
բարոյական պարտք կայ եկեղեցւոյ և ազգի մէջ,
ուրեմն ցանկալի է որ եկեղեցւոյ զլխաւոր կառա-
վարը—կաթողիկոսը—լինի մի մարդ ընդհանուր
ազգին ծանօթ և սիրելի իր հայրական խնամքով
անձնութեամբ և մեծագործութեամբ, որ
կարողանայ պատկառ. ազգը և որի խօսքը պատ-
գամ լինի ազգի մէջ: Այն գործը, որը միմիայն
բարոյական պարտքի սկզբունքի վրա է հիմնած
կարող է առաջ մղել միմիայն ընդհանուր սէրը
վայելող մի ժողովրդական անձն: «Բազմութիւնը
կը սիրէ ինչ որ մեծ է», պէտք է յարգած բազ-
մութեան այդ զգացմունքը: Իսկ եթէ բազմութիւ-
նիցը, ազգիցը խլվի նենգութեամբ նրան սիրելի
մեծ մարդը, ազգը արդար սրտմտութեամբ երես
կամենում էր տեսնել միմիայն իր ընտրեալին, իր

այս փուլը ձևած թափառում է՝ անկարող իր արհեստի միջոցով իր գերազանցող օրապահիլը հայթհայթելու։ Չը կայ երևույթ առանց պատճառի։ Այդպիսի տխուր երևույթի պատճառները մի քանիսն են, որոնց ըստ մեր կարողությունների կը թուլենք։ Առաջին, արհեստները մեղանում ամենաընկած դրույթան մեջ են։ Կարելի է, գրեթե, բացարձակորեն ասել որ մեր մեջ ոչ մի արհեստավոր չէ աշխատում բարեբաղ իր արհեստը, այլ շարունակում է նրան հին, պատկանական ձևով։ Հենց այդ պատճառով, տեղական արհեստավորների շինած կոշտ ու անհասարակները հետզհետե տեղի են տալիս ժամանակակից կատարելագործուած արհեստավորաց ձեռակերտներին առաջ։ Երկրորդ դարը յառաջդիմութեան դար է, ամենադիմադրութեան, ամենայն արհեստ անդադար առաջ է դիմում, և վաղ նրան, ով չի կարողանայ ընթանալ ժամանակի հետ։ Մենք տեսել ենք փերթած, ետ ընկած բոխիկներ, տեղեկացել ենք այդպիսիների տգէտ գործողութեանց, և այդ պատճառով է այն պատճառով որ դարձ 30—40 տարի առաջ դուրս գալով համալսարանից, կորցրած և ուսանող և սէր դէպի դիմութեանը, չեն հետեւել իրանց մասնագիտութեան յառաջդիմական խոշոր քայլերին, չեն աշխատել իրանց փորձառութեան գործնական գործադրութիւնից փորձառութեան ստանալ։ այն ինչ դրա հակառակ դիտելը մեր յիշած ժամանակից առելի վաղ աւարտող աւելցարդ բոխիկներ, որոնց անունը չէ կարելի տալ առանց անհաճութեան, նրանց հմտութիւնը՝ հարկաւորութեանը մի քանիսն ազատել է մահաւան ճիւղաներից։ Վեր առնելը գրականութիւնը։ Այդտեղ ևս նոյնատեսակ երևույթի ենք հանդիպում։ 50 թուականներում մի նշանավոր քաղաքում գործող երկրատեսարկական մի խումբ, որ իրան ազատամիտ էր համարում, հաւածված էր մի խումբ յետամնացներից, նրանց ետեւից քարեր էին ձգում...։ Բայց այսօր ինչ էք տեսնում։ Նախկին ազատամիտները այսօր ինչ էք տեսնում։ Նախկին ազատամիտները այժմ իրանք քարեր են ձգում ներկայ ազատամիտ երիտասարդութեան վրա, այժմ իրենք համարվում են յետամնացներ։ Մէկը՝ սրանից 10—20 տարի առաջ պատում էր ազատ գաղափարները, մտաւոր էր կաշառակերութիւնը, քրեականացում էր ամեն բան...։ Բայց այսօր այդ բոլորը երիտասարդական ֆանտազիայի տկար արտադրութիւն համարելով, այժմ ինքը ատելով առում է իր նախագաղափարները, այժմ ինքը չէ հրաժարվում իրաւի կաշառակերից, այժմ ինքը ատելով ատում է լրագրութեան ազատամիտ բանալը և ընտաղատներին։ Նրա կարծիքով հարկաւոր կը լինէր «ВЗЯТЬ ВСЁ КНИЖИ»

երկու յիշած պայմաններին համապատասխանող երկու եկեղեցական կայ մեր մէջ՝ Ներսէս և Խրիմեան։ Այս ճշմարտութեան մէջ հաստատացած է նա՝ ով նրանց կուսակից է, և նա՝ ով նրանց հակառակորդ է։ Բայց չափ, կըրքը և պատգամ լինելու փառքը միայն քիչերին չէ կարող դադարեցնել։ Կան այնպիսի եպիսկոպոսներ, որոնց մասնաճիւղ են անում իրեն ամենաարժանաւոր կամ ամենապարտաւոր կաթողիկոսներ, բայց այդ սըրբազան հայրերի գործունէութեան ասպարէզը եղել է միայն մի թիւին կառավարութիւն, շատ հաւանական է, որ նրանք իրենց պաշտօնավարութեանը լաւ կատարած կը լինեն, բայց թիւ մական կամ նմանօրինակ պաշտօնավարութիւն ամենաանհաղ և սառնամանակ է, որ նրանք այնքան չէ կարելի եղբայրացնել թէ որքան յարմար կը լինեն նրանք կաթողիկոսութեան համար։ Նըրանք այնպիսի դժուարութիւնների չեն պատահել որոնց, օրինակ, Կ. Պոլսոյ պատրիարքներն են ներթարկվում, վասնորոյ նրանց կարողութիւնը, ընդունակութիւնը, բնավարութիւնը, ինչպէս նաև թերութիւնները մեծ մասամբ անյայտ են մնացել։ Շատ կարելի է նրանք աւելի գործունէայ և աղբիւր սիրելի պատրիարք կամ կաթողիկոս կը լինէին, բայց այդ ով գիտէ, այդ միայն մի յոյս է, որ կարող է խաբարել լինել։ Գուցէ՛ նրանք ընդունակ են միայն իր թիւակալ առաջնորդ, տրեւտեսագէտ կամ պատմադիւր, իսկ կաթողիկոսական գահի վրա ցոյց կը տալին իրենց բոլոր տկարութիւնը և անընդունակութիւնը և ի դերն կը հանեն բոլոր յոյսերը։ Ուրեմն լաւ է դժուարութիւններից ամենափոքրը ընտրել, այսինքն կաթողիկոսական գահի վրա տեսնել մէկը այն և պիտուականներից, որոնք իրենց պատրիարքութեան դժուար պաշտօնավարութեան ժամանակ ցոյց են տուել իրանց բոլոր ընդունակութիւնը և

«ВЗЯТЬ ВСЁ КНИЖИ», մի խոսքով դա մի այնպիսի տիպ է, որ կարող էր արտադրել միայն յետամնացութիւնը։ Եւ այդպիսի տիպեր ամեն տեղ պակաս չեն, դրանք մի մի խափանաւորներ են երիտասարդութեան ճանապարհի վրա...։ Բայց հիմա է յաղթութիւնը։ Երիտասարդութեանը այն երիտասարդութեան, որի գրօջակի վրա փայլում է «յառաջդիմութիւն» նշանաբանը։ Արհեստավորաց անհասարակելի դրութեան երկրորդ պատճառը՝ պահանջի և առաջարկութեան անհամեմատութիւնն է։ Նիթէ մի քաղաքում լաւ կարող են ապրել 10 կոշակաւորներ, դարբիններ և այլն, երբ նրանց թիւը 15 է դառնում, բոլորն էլ հազիւ հազ են կերակրվում, իսկ երբ դրանց թիւը 20—25-ի է հասնում, այն ժամանակ բնականաբար, արհեստավորներն մի մասը թողնում է իր արհեստը և կիթէ չքաւոր անձն է պարագ ման է գալիս, իսկ եթէ փոքր ինչ ունենոր է, նա դառնում է մնացործ, սրճարանատէր, օղեկաճառ, մանրավաճառ և այլն և այլն։ Երբորդ պատճառը մենք համարում ենք համարութեան ոչնչացումը (գոնէ մեղանում) որի պատճառով թերուս վարպետները իրանց վարմունքով, իրանց թերակատար ձեռակերտներով՝ արատաւորում են և արժանաւոր վարպետների անունը։ Առանց խորին ամոսումների, անկարող ենք յիշել համարութեան ոչնչացման մասին։ Դրա գեղեցիկ հիմունքներն էին՝ ոչնչ, միաբանութիւն, գովելի հնազանդութիւն դէպի նշանակված մեծերը։ Համարութեան ժամանակ, եթէ մի վարպետ լաւ էր պատրաստում պատուիրված առարկան, պատուիրողը իրաւունք ունէր դիմել զանգատով ուստաբաշուն, այդ հարցը քննարկում էր արհեստավորաց ժողովում և ճշմարտութիւնը ստուգվելուց յետոյ, պարտաւորված վարպետը ենթարկվում էր պատժի, վարպետների ուրոշմամբ նա մի որոշ գումար վճարում էր յօգուտ վարպետական դրամարկի։ Բայց դրանից՝ երբեմն մի քանի օրով փակում էին նրա արհեստանոցը կամ կրպակը և դրանց բանալիները պահվում էին ուստաբաշուն մօտ և ոչ դի մտքից չէր անցնում կասկածել, որ կարող են իրանց կրպակից բաներ յափշտակել։ Ոչ ոք իրաւունք չուներ արհեստավորներից, աշակերտ վարձել, առանց ուստաբաշուն դիտարկելու։ Ուստաբաշուն որոշեալ նուր էր անում վարձողին և վարձվողը, յօգուտ վարպետական դրամարկի։ Մինչև անգամ արհեստավորներն ընտրութեանը մասին զանգատը քննարկում էր արհեստավորաց ժողովը և վճառում։ Համայնական դրամարկի մէջ բացի դրանից իւրաքանչիւր շաբաթ հաւաքվում էր անդամակիցներից՝ մի մասնաւոր տուրք, և այդպիսով դոյացած

ընտրութիւնը և թերութիւններով հանդերձ բաւական արժանաւոր են հանդիսացել, մասնաւոր ուր փայլում են ընդհանուր ազգի ամենաընդուն համակրանքը։ Սակայն «Մեղու» և «Նոր-Գար» լրագիրները իրենց անվերջանալի կաթողիկոս յօդաւածներում և թղթակցութիւններում երբեք ի նկատի չունենին ոչ եկեղեցւոյ և ազգի շահը և ոչ նրանց պահանջը, այլ նրանց առաջնորդում էր իրենց անձնական շահը և կիրքը։ Ահա թէ ինչպէս։ «Մեղու»-ի կաթողիկոսութիւնը ասկաւ առաւել կերպարանափոխում էր, պարզքը և իրաւունքը սահմանափակում էր, նոր նոր կանոններ էր ստեղծում, հին սխալները և զեղծումները իրեն կանոն էր առաջարկում, կաթողիկոսական ընտրութիւն չափում էր և ձեռնում և այդ բոլորը մի այնպիսի չափով, որ այդպիսի կաթողիկոսութեան համար միմիայն մի ընտրելի կայ ամբողջ ազգի մէջ։ Աւելի ուղիղ կը լինի ասել, որ «Մեղու» այդ սրբազանի համար մի նոր կաթողիկոսութիւն կազմել էր առաջարկում, քան թէ Մայր-Աթոռի թափուր գահի համար մի նոր ընտրելի։ Այդ լրագիրը արդարեւ իր հաւանական ընտրելի անունը չափեց, բայց դրա պատճառը նա է, որ ա. մի ամենաթիւթի քննադատութիւն բաւական կը լինէր խաղանք նրա ձայնը իր խանձարուրի մէջ, բ. ինքը «Մեղու» խմբագիրը շատ լաւ գիտէր որքան դատապարտելի պաշտօն է յանձն առել, որով կամենում էր ազգին վրդ փայտթել մի այնպիսի անձն, որին մեծամասնութիւնը չէր ճանաչում, իսկ փոքրամասնութիւնը չէր կամենում երբեք ճանաչել... և դ. «Մեղու»-ի խմբագիրը ինքն էր հաւատարմ իր գործի յաջողութեանը և արդարութեանը, վասնորոյ և չէր էլ կամենում թէ ներկայումս և թէ ապագայում իր թերթի մէջ այդ անունը ընթերցող ազգը

գումարը գործ էր դրում օգտակար գործից վրա, այդ գումարից օժանդակութիւն էր տրվում չքաւոր հիւանդ արհեստավորներին կամ նրանց այրիներին, այդ գումարից գնվում էին եկեղեցական դարձեր, նշանաւոր տօներին եկեղեցւոյ ջանքերին թիւն (համայնք), տարուայ մէջ որոշեալ տօներին մատուց էր անում։ Մի այլ անգամ գուցէ մենք միջոց ունենանք աւելի մանրամասն խօսել արհեստավորաց համայնական նախկին կազմակերպութեան մասին, իսկ առ այժմ մեր ցանկութիւնն է, որ այդպիսի ազնիւ, ճակատի քրտնեղով, իր ջրտաբաղլիները ոյծով ապրող հայ արհեստավոր մասին աւելի խօսվէր քան մինչև ցայժմ է եղել։ Հայ արհեստավորը արժանի է դրան, նրա կրծքում բաբախում է իւրաքանչիւր բարի գործին արձագանք տուող սիրտ, նրա ինքնօրոյն, ֆիզիքական աշխատանքից ամբացած հոգին ու մարմինը ընդունակ է ամեն բարեխղճութեան։ Աւելորդ չի լինի աւելացնել, որ ներկայումս արհեստավորաց մի քանի համայնքներ աշխատում են նորոգել համայնական նախկին կարգերը, բայց ավստ որ դրանք անցեալ կազմակերպութեան տկար ստուերն են միայն ներկայացնում։ Եւ կատարելապէս վերանորոգել արհեստավորաց նախկին համայնքի մէջ գործադրվող ձեւերն ու կարգերը, մենք անկարելի ենք համարում։ Դրա պատճառները բազմաթիւ են, որոնց կաշխատանք պարզել մի այլ անգամ։ ***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» լրագրի Կ. Պոլսի թղթակից պ. Հայկակը, չորեքշաբթի օրը, ապրիլի 25-ին, ժամանեց Թիֆլիս, որտեղից պէտք է այս օրերս Էլմիածին ուղևորվի կաթողիկոսական ընտրութեանը հանդիսատես լինելու համար։

Թիֆլիսի Ներսէսեան Աղգային-Հոգևոր դպրանոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտնել մեր լրագրի մէջ, որ Ներսէսեան դպրոցում աշակերտների տարեկան հարցաքննութիւնը սկսվել է ապրիլի 27-ին և աւարտվելու է յունիսի 8-ին։

Մեզ խնդրում են յայտնել, որ արդէն մամուլի տակից դուրս է եկել «Գործ» ամսագրի մի համարը հետեւեալ բովանդակութիւնով. I. «Ընթերցողներին», II. «Ներսէսեան» (պատկեր) — Շիւրվանդադէ, III. «Բժիշկ կանաչը Հնդկաստանում» — Ս. Թադէոսեան, IV. «Սիրոյ երգ» — Պատ, երգիչ, V. «Բուրժուազիան մեր գրակ. մէջ»

Իր երեսին խի է իր թերթը։ Նա երկուսում էր հասարակական կարծիքից, թէ՛ նրա գոյութիւնը նա հրապարակու մերժում է։ Նա խորամանկութեամբ է կամուրջ մուրեցնել և խաբել այն հասարակութեանը, որ դեռ երէկ նըրա համար յօբելանի պսակ էր հիւսում։ Նա այնքան վատ գնահատել, որ իր լրագրի 25-ամեայ գոյութիւնը պահպանող և նրա յօբելանը այնքան չքեղ տօնող ազգի բազմը կամեցաւ զոհել իրեն և իր ընտրելի շահին և կրքին։

Իսկ «Նոր-Գար» պոռոտախօս լրագիրը սկզբունքով համարում էր «Մեղու»-ին, միայն գործունէութեան համար առանձին ճանապարհ էր ընտրել։ Ի՞նչ թէ երկու ուղիւղումը աւելի բանաւոր էր քան մէկը։ Թէ՛ն «Նոր-Գար»-ը առաջարկում էր Մեղեքեղեկ սրբազանին իրեն ամենապարտաւոր կաթողիկոս ընտրելի, բայց դուրս բուն նպատակը ուրիշ է։ Ամենից առաջ այդ լրագրի, ինչպէս նաև Կ. Պոլսոյ հակաքրիստոնէականների նպատակն էր «ամեն ճիշդ թափել արդեւ լինելու Ներսէս պատրիարք իկաթողիկոսացմանը», ահա բուն խնդիրը։

Բայց Ներսէս պատրիարքի կաթողիկոս ընտրվելուն արդեւ լինելու համար հարկաւոր էր խոհեմութեամբ վարվել, հարկաւոր էր մի ուրիշ արժանաւոր եկեղեցական առաջարկել և ցոյց տալ, հաւատացնել, որ սա աւելի յարմար է քան Ներսէսը։ Ընտրութիւնը ընկաւ մեծ մասամբ Մեղեքեղեկ եպիսկոպոսի վրա, նա ունէր բաւական յարմարութիւններ որ կարելի լինի համեմատել Ներսէսի հետ. նա Ռուսաստանից էր, քիչ շատ տեղեկալ երկրին և ժողովուրդին, նա յարգված անձնաւորութիւն էր և մասնաւոր նրան աւելի յարմար էին համարում մի քանի անաչառ մարդիկ, ինչպէս օրինակ Խիզըճեան և այլն։ Եւ այսպէս Մուրադեան եպիսկոպոսը և նրա փոքրաթիւ աղանիւ կողմնակիցները անգիտակցաբար դարձան

—Հ. Առաքելեան, VI. «Գեղջուկի յոյսը» — Սրինյ, VII. «Խրիմեան Հայրիկ» — Յ. Տէր-Սովակեան, VIII. «Անձնագրի Նապաստակ» (Շեղերից) թարգմ. Շիւրվանդադէ, IX. «Նաւակներ իմ ընկերին» — Բ. Կ. Կ. Խ. Սիմոնի հայրը — (Գիւրի դը Մօպսանի), թարգմ. Մատոյեանի, XI. «Մի պատասխան» — Ս. Հայկակ, XII. Մամուլի տեսութիւն, XIII. Յայտարարութիւններ։ Բաժանորդները կը ստանան ձրի։ Իսկ առանձին համարը արժէ մի ռուբլի։ Յանկացողները թող դիմեն. Тифлисе, Гоголинский просп., д. Ананова, кв. Ширванзаде.

«Русский Курьер» լրագրի մէջ կարդում ենք. «Կովկասեան երկիրը իր տեղագրական դրութեամբ, որպէս յայտնի է, երկու մասերի վրա է բաժանվում, որոնք միմեանց հակառակ են իրանց երկրագործական գործունէութեան պայմաններով։ Կովկասեան արևմտեան մասի նշանաւոր ստորին տարածութիւնները այնքան առատ են ջրով, որ տեղական ազգաբնակչութիւնը, ենթարկվելով մըշտապէս հիւանդութիւններին, առանց մշակման է թողնում այդ տարածութիւնները, չը նայելով հողի պակասութեանը։ Կովկասի արևելեան կիսամ, ընդհակառակն, պտղատու հողի մշակութիւնը հնարաւոր է միայն ոռոգման օգնութեամբ։ Պետական կաշքերի միջոցով, հող տանելով Կովկասեան երկրը մշակման կողմից բարձրելու վրա, առաջարկութիւն է արել նոր ջրանցքներ բանալ անպտուղ և անապատ դաշտերում։ Այդ առաջարկութիւնը մեծ համակրութեամբ է ընդունվել, և այդ գործում առաջին նշանաւոր քայլն արդէն արված է. ձեռնարկված է ճահճների ցամաքեցնելուն Բաթումի շրջականերում։ ջրանցքներ անցկացնելու միջոցով, ինչ որ վերաբերում է Կովկասում հողերի ոռոգելու. կարգի վերաբերեալ խնդրին, պետական կաշքերի միջոցով վերականգնել մշակութիւնը և օրէնսդրութեան մի նախագիծ։

Գորպատից «Новое Время» լրագրին գրում են. «Այստեղ մտադրութիւն ունեն մօտերումս Դոմբերգում հուշակաւոր ընադէտ, պրօֆէսոր Բէրի արձանը կանգնեցնել։ Արձանի տեղը արդէն որոշված է։ Պրօֆէսոր Բէրը, որը վախճանիկեաւ Խոթանասուն թաւականների վերելում, ընծայեց իր 2000 հատոր գիրք պարունակող գրադարանը Գորպատի համալսարանի գրադարանին։ Բէրը ծնւ վեցու Գերմանիայում, վերջը ուսուցաց հայտաւորութիւնը ընդունեց. վախճանիկեաւ և հանդիսաւոր կերպով թաղվեցաւ Գորպատում։ Նրա որ-

հակամեղսեանների ձեռքում գործիք։

Մուրադեան եպիսկոպոսը եղաւ վաճառ հակա-ներսէսեանների ձեռքում, որի ետեւից նրանք ամենայն դրապարտութիւն և հարուածներ տեղացին Ներսէս պատրիարքի վրա, մինչդեռ հակառակ բանակից եթէ հարուածներ տեղացին, պէտք է կոչելին հականերսէսեանների վաճառն, այն է Մեղեքեղեկ սրբազանին։ Ահա սա է «Նոր-Գարի» գաղտնիքը, իրեն Մեղեքեղեկ եպիսկոպոսի կուսակից, սրա մէջ աւելի լաւ կարելի է համոզվել երբ յիշենք որ այս անուանարկ թերթը աւելի շատ աշխատեց գրգարտել և վատաբանել Ներսէս պատրիարքին, քան երևան հանել և լաւ պաշտպանել Մեղեքեղեկ սրբազանին։

Շատ հանգամանքներ էլ կան, որոնք հաստատում են, որ «Նոր-Գարի» լրագրական սլաքը երկու ծայր ունի. մինչդեռ մի ծայրով հարուածում է Ներսէսին և առիթը պատահելիս պատրաստ է հաւրուածել և խրիմեանին և մի երրորդին, այդ սլաքի միւս ծայրը լուրթեամբ ցոյց է տալիս մի ուրիշ ընտրելի։ Իսկ Մեղեքեղեկ եպիսկոպոսը մի հիմը է, մի կենդանի է այդտեղ, որի վրա ամբարձրած է «Նոր Գարի» երկծայրի սլաքը, նրա երկու ծայրերն էլ ազատ և ապահով շարժելու համար։

Բայց ինչ միջոցներ չը գործ դրին հակառակորդները իրանց նպատակին հասնելու համար։ Նրանք շարունակ երբեմն սպառնում էին, երբեմն զրպարտում, երբեմն խորհուրդներ տալիս ազգի բարօրութեան համար, երբեմն կասկածելի կատարեցան նրանց հուշակը և երբեմն աղաչում էին որ Ներսէսին և խրիմեանին չընտրեն, ի նկատի ունենալով ուսուսացող շահը։ Ռուսաստանոյ ճանկի պատրիարքը «Մեղու» և «Նոր Գար» լրագիրները իրանց վայրախօսութեամբ և ստիկստութեամբ աշխարհ թողացրին։

դիքը դեռ ևս ուսում էին առնում Դժոխատեան համալսարանում:

Երկուշաբթի, ապրիլի 30-ին, Արծրունու թատրոնում կը տալիք Վերջին հերկայացումը Կ. Պոլսի յայտնի կոմիկ-երասանն ալ, Թուրքիանման մամակդուծեալ հայ-դերասանական խմբի ե իշխանունէի Անդրանիկօյալի կը ներկայացոյլի առաջին անգամ Ի. «Մէջէ հարամանց» ծիծաղաշարք կօմէդիան 1 արարուածով: II. «Տիկնը ննջում է» կօմէդիան 1 արարուածով: III. «Ետեղերու բժշկը» կօմէդիան 1 արարուածով: Երկրպայցման վերջը իշխանունէի Անդրանիկօյան լէզզլիսիա կը պարէ: Յոյս ունենցոր Թիֆլիսի հայ հասարակութիւնը կը պատուէ ալ, Թուրքիանի վերջին ներկայացումը կը ներկայութեամբ: Տօնախմբը Զարկում են Արծրունու թատրոնի կասանկներ սովորական գնդերու ծրարներ:

Ամսիս 20-ին, չորեքշաբթի, Թիֆլիսի Գալանեան օրիորդաց ուսումնարանի դահլիճում նոյն ուսումնա-
րանի ուսուցիչները՝ պ. պ. Թանդեան և Արասխա-
նեանց դասաստուծիչներ կարգացին յօգուտ նոյն
ուսումնարանի զբաղարանի: Պ, Թանդեանը իր դա-
սախոսութեան նիւթէ էր շինէր ՀՀուսմանխնայները
վերամշակութեան ժամանակ, իսկ պ. Արասխանեանը
«Այլաբային կեանքը Ֆրանսիայում Լուդովիկոս
XIV-դի ժամանակ: Երկու դասախօսներն ևս բաւա-
կան հետաքրքրեցին հասարակութեանը, որը իր գո-
հովիւնը յայտնում էր ծափահարութիւններով:
Գահլիճը լիքն էր հասարակութեամբ և ինչպէս ե-
րևում էր մեծ համակրութեամբ էր վերաբերվում
վերոյիշեալ ուսումնարանի զբաղարանը հարստաց-
նելու մտքին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

21 Ապրիլի

Ամեն կարգադրութիւնը վերիվայր եղան
Ռուսիոյ դեսպանատունը չառ յստակ կերպով
կը յայտարարէ թէ՛ կառավարութիւնը չուզէր
մազլին չափ իսկ չդիզի Պալատինայի տրամադրու-
թիւններէն և պէտք է որ թիւրքիոյ հայոց թե՛
մերու պատուիրակներն անձամբ Էջմիածին եր-
թան իրենց քուէներն իտրելու Պ. Մյուռ, ռուս-
կան դեսպանատան խորհրդականը կարեւոր տե-
ւակցութիւն մը ունեցած է Ս. Պատրիարքի և կա-

Յիշենք թե՛ «Դոր-Գարը» և «Վեղուհ» ձևւ ձև
ով տուած ինչէր ասացին և շարունակ ինչ են աս
տում և որքան ճշմարտութիւն և անկեղծութիւն
կայ այդ ասածներին մէջ, հաշուենք այդ բոլոր
և կըւելով նրանք, ներկայացնենք արդէ անաշտ
դատաստանին:

1. Խորմանան սրբազանի համար ասացին. «Նա իբրև հայ եկեղեցական մեր սրտի սրբավիճին է»։ Այս ասողները այդ խօսքերով, ուրանում են նրա բոլոր բարձր արժանաւորութիւնները և կամենում են նա սակ, որ նա միայն իբր եկեղեցական է մեզ սիրելի, կարծես ասգը չը գիտէ որտե՛կ Խորմանան ի միւս եկեղեցականների՝ դասակարգել Կիրակոսն երկից, Սուրմակներեցի, ուխտադուռժ կաթողկոսն երկից, որոնցից շատերը այսօր էլ բարձր են եկեղեցական պաշտոններ են վարում և աստիճաններ վաշելում և որոնք այժայե է Խորմանան Հայրիկի հեւասար մեր սրտի սրբութիւն համար լինէ։

2. Ներքևյան պատրիարքի համար ասում են. «մի այն հանգամանքների բերումամբ ժողովրդականության թիվն է հուշակ ստացած...», զիտուվեալմբ մոռա նապով որ հանգամանքները երբեք ոչդի ոչ ժողովրդականություն թիվն կը տան և ոչ մինչ հուշակն կը հանեն, եթէ այդ պարզը ինքը չը լինի հանգամանքների ստեղծողը, նպատողը, յառաջ մղողը և ղեկավարը: Գոնէ յիշէին այն յայտնի մարդկանց, որոնք իրանց շրջաններում նոյն զիջքի մէջ են, ինչպէս Ներքես և Խրիմեան հայկական շրջանն մէջ, և որոնք համար այնօան սիրում են խօսակ Ներքեսի համար այգալիսի կարծիք ունեցողները:

3. Ասում են. «Ներքես պատր. յաղթված է իսկ յաղթուածի համար դալինեայ պատկներէ Զեւսի»: Բայց թող իմանան, որ նա յաղթվելու պատերազմի դաշտի վրա, պատմութեան մէջ յաղթող է հանդիսանում, իսկ այդպիսի յաղթվելու

Թողիկոսական Զանձանաժողովը անդամոց հետ սոցիալական կապերի միջոցով պետք է ձևավորվի և զանազան գործողություններ իրականացնի։ Թողիկոսական Զանձանաժողովը պետք է ձևավորվի և զանազան գործողություններ իրականացնի։ Թողիկոսական Զանձանաժողովը պետք է ձևավորվի և զանազան գործողություններ իրականացնի։ Թողիկոսական Զանձանաժողովը պետք է ձևավորվի և զանազան գործողություններ իրականացնի։

Պ. Օնուխի այս վերջնադիրն բաւական չլիթի
կացութեան մէջ կը թողու զմոք: Հարկ է որ մեր
պատուիրականեր Էջմիածնի երթման թէ ոչ: Բաւա-
կան գրաւեց այս խնդիրն ամենուս մտքերն:
Յամանսժողովոյ մէջ կարծիք յայտնվեցաւ թէ՛
օգտակար չը տեսնուիր պատուիրակներու ամ-
պարտութիւն: Այսին թէ ինչ պիտի ընեն պա-
տուիրակներն: Արթի միայն Պօլսոյ հայոց
քուէներուն ներկայացուցիչ պիտի լինին, քա-
նի որ Ռուսոյ կառավարութիւնը պիտի
չընգունի մեր երկու ներկայացուցիչներն իբր
65 վիճակներու ներկայացուցիչ, ուրիշ կերպ
լինելու գիտար լինիք. մեր Ազգ. ժողովը ալ զայս
չընդունի, եւիշ հնարք մը վնասուելու էր: Այս նկա-
տողութիւններն ահաջ առաջ ունենայով Յամանսժո-
վը օգտակար համարեց որ Մակար սրբազան իբր պա-
տուիրակ թիւրքիոյ Հայոց մեր քուէներն տայ, եթէ
կարենայ վերջին պահուն համոզում գոյացնել
տալ թէ՛ թիւրքիոյ հայոց 65 թեմերու ներկայա-
ցուցիչ չենաւոր Ազգ. խորհրդին, լմա, եթէ չէ,
ոչինչ ունի ընտրել, պատուիրակներն ալ աւելի զատ
բաւ մը կարող չը լինեն գողցէ ընել:

Պատրիարքը հետևեալ յանձարարադրով այս պաշտօնը յանձնեց Մակար սրբազանի:

Ամենապատիւ Տէր Մակար սրբազան Արքեպիս-
կոպոս արժանեւորի տեղակալ կաթողիկոսու-
թեան ամենայն Հայոց Արարատեան Առաքելա-
կան մայր-Աթոռոյ կաթողիկէ սրբոյ Էմիլիանի,
և պատուիրակ Հայոց Օսմանեան պետութեան:

Ազգային նրեսփոխանական ընդհանուր փողոցին
Հայոց Օսմանեան Պետութեան գումարեալ յերկ-
րորդում աւուր ամսեանն Ալլիիլ այս ամի յաթի-
ռանիստ աւար եկեղեցւոյ մայրաքաղաքիս, ըստ
ստեանական կարգաց և կանոնաց քուէարկեաց
զերիս ընտրելի Եպիսկոպոստոնս ի Կաթողիկո-
սութիւն ամենայն Հայոց Արարատեան մայր Ա-
թոռոյ, և լվնեաց միանգամայն զնոյն հռամտն
ցուցակ ընտրելեայն հաղորդել ամենայն Հայոց
Կաթողիկոսութեան ընտրողական փողոցն պա-
տուրեաց ի ձեռն Պատմիրարկի:

Ըստ այսմ մճուռյ Ազգային երեսփոխանական

ահալան յաղթութիւնն է, այդ չափ խաղ է, ուր կո-
րուստողը կը շահի»: Բայց Ներսէսն դեռ յաղթված
էլ չէ, անյաջողութիւնը դեռ յաղթվել չէ նշանա-
կում, քանի որ գաղափարը ապրում է տակաւին
և պիտի ապրէ:

4. Այդ բարդիկ առաժ էն. «մեր մէջ ամենա-
յետին թիմակալ առաջնորդը աւելի գործունեայ
է և վարչական ընդունակութիւն ունի քան Ներ-
սէսը»: Հանրի է յիշել մեր այդ թիմակալ առաջ-
նորդներն մի քանիսը գործունեութեանց և ընդ-
նակութեանց համար: Այ՛, նրանց պատուի համար
լռենք, մանաւանդ, որ ամէն մի Ռուսահայ լա-
ծանօթ է իւր թիմակալ առաջնորդները գործունէ-
ութեանց և ընդունակութեանցը, բայց թող տես-
նէ նաև ազգը թէ որքան կուրծքիւն և չարա-
մտութիւն կայ նրանց դատարկ և ձրի զրպարտու-
թեանց մէջ, մամաւանդ երբ չը մոռանանք այս-
խօսքերը բաղդադել իրանց միւս ասածներէ՝ հետ-

5. Այսօր եմ՝ Հաթիդղիկոսական ընտրելին՝
պէտք է արդիւիս անձ լինի, որ էլ միաժամայ մի-
աբանութեան հետ հաշտ և համբարախ լինի, իսկ
Ներքոսին չէ սիրում միաբանութիւնը: Կարծես
կաթողիկոսը ընտրվում է մի քանի հասարակ
միաբանների սպասարկութեւն ընկերակից լինելու և
ոչ թէ՛ հրամանաւ, վատերը պատժելու և կարգ
ու կանոն սահմանելու:

6. Ասացին և ասում են դարձեալ. «Ներսէս է Խորիմանս անհրաժեշտ են Տաճկաստան մնալու, որ լովճետն սրանք են միայն նրանց ցաւերին, իղձերին և վարկած յոյսերին տեղեակ, սրանք միայն կարող են Տաճկաճալաստանը փրկել, անկարելի է սրանց տեղից շարժել, մինչև անդամ իւրն ջերմ հայրենասիրներ նրան օձիբից բռնում և են սպառնալով գոռում. Վնչ՛ն, կամուսնում էք ձգել և փախուստ տալ, համաձայնվեցէք, այդ հայրենասիրութիւն չէ». բայց երբ այդ դիւսնադիտութիւն չէ յաջողում նրանց, երբ դրանց պատասխանում են, որ

ժողովրդին Հայոց Օսմանեան պետութեան փութամբ զտեղեկագիր ընտրական գործադրութեանց նոյնին իսկ ընտրելեաց յղել ընդ գրոյս առ Ամենապատուութիւն ձեր, և յանձն առնել Բարձր Սրբազնութեան ձերաւ զպաշտօն պատուիրակութեան Հայոց Օսմանեան պետութեան, ինքդրելով զի յա՛նուն և ի դիմաց մերոց և ամենայն վիճակացն Հայոց, որ ընդ Օսմանեան պետութեամբ են, բարեհաճայցիք ներկայացուցանել ամենայն Հայոց կաթողիկոսութեան Համազգային ընտրողական ժողովոյն զպա մամնայն որոշողութիւն Ազգային երեսփոխանական ժողովոյն, և իբրեւ պատուիրակ Հայոց Օսմանեան պետութեան ի համազգային բարձր ժողովին անդ առաջի առնել զիրաւուն մասնակցութեան Օսմանեան Հայոց, և ինքրել զգործադրութիւն որոշողութեանց և վճռոց, որ ի տեղեկագիր անդ մերում, Ազգային երեսփոխանական ընդհանուր ժողովոյ Հայոց իբր ներկայացուցչի համօրէն վիճակաց Օսմանեան Հայոց, յանուն մեր և ժողովոյն, վասն ընտրութեան Հայրապետի ամենայն հայոց:

Ամենապատիւ Սրբազան Եղբայր, ի սահմանի
առաջ յայտնի է պաշտոն պատուիրակութեան
բարձր Սրբազնութեան ձեռքով, յանուն և ի դիմաց
ամենայն վիճակաց Հայոց Օսմանեան պետութեան,
զոր յուսով ենք զի Զերովդ հանրածանօթ իմաս-
տովեամբ և խափակմութեամբ ի յանդ հանելով
բարեհաճելոց էք փութալ զեն իրացն հաղորդել մեզ:
Քահանայապետն երկնից Տէր մեր Յիսուս
Քրիստոս առաջնորդեացէ համագլխական ընտրողա-
կան բարձր ժողովոյդ յընտրութիւն արժանաւո-
րագոյն հայրապետի ամենայն Հայոց ի զահակա-
նութիւն մեծի Աթոռոյն Սրբազան Առաջնորդն
մերոց Թադէի և Բարթոլոմէի, և առաւելագոյն
առն Աստուծոյ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լու-
սաւորչի:

Առ այժմ ինդիվիդը այս վիճակին մեջն է: Այսօր կաթողիկոսական ընտրութիւնը գործող բնական բերմամբ ձեզմէ կախում ունի, աւ չէք կրնար ըսել թէ ձեր վրա ճշնոյմ կը բանեցնենք:

Ի՞նչ պետք ընկնը երբ ձեր ընտրութիւնը կատարէք առանց մեր մասնակցութեան: Այս հարցումը երբ պ. Սերվիշչէնի ըրաւ պ. Մուս, լռութիւն պահեց վարչակաւն ժողովի ատենապետը, ըսելով թէ այժմէն ապագային լրան չկնք կարող խօսել: Նոյնը մինչ ալ կրնանք ըսել սատարերութեանը որ Ներսէս Պատրիարքի ընտրութիւնը կը հարկէն ամէն դժուարութիւն: Եթէ մենք մեր ջոկանքն չը տուինք ստուար մեծամասնութեամբ Ներսէսի, ուրեմն եթէ առանց մեր ջոկ-

Ներքեմսին կարող են բոլորովին անդործունեություն հաստատվել, բռնություններ լուծելու, թե՛ Օսմանյան պետությանը և նրան իսկ Ազգ. ժողովը, որը անցյալ տարի իսկ ընդունեց նրա հրաժարականը և այսօր իսկ ամեն մեղքեցուցված դեռ զինված է նրա դեմ՝ և այլն, այն ժամանակին էլ այդ վախճանողի հակառակորդները փոխում են գեղը և ճգնում են ցույց տալ որ «այդ Ներսեսը բոլոր արժանաւորութիւններից զուրկ մարդ է, որ նրա շնորհիւ Տաճկահայաստանը կորցրել է իր անդորրությունը և կորցնելու վրա է, որ Ներսեսը տաճկահայերի գործերը տալին ու վրա է արել»։ Բայց այս աւտոլները իրենց միջև կաթողիկոսական շահաւէտ խնդրի ծագելը՝ իրանք էլին ներքողներ են ուղերձներ հրատարակում ի պատիւ Ներսեսի։

7. Աստուծոյ թէ՛ Վարդգ, ժողովուրդ այն պատճառով Ներսէսեան առաջին ընտրելի հռչակեց, որ երեսփոխանները և եկեղեցականները մի մասը նրա կուսակիցներ են, որոնք պաշտօն և շահ են ակնկալում նրանցից: Այդ ատուղները յիմար են ձևանում և չեն խառնադաշնաւորւում, որ մի և նոյնը կարելի է ասել և ամեն ընտրելի համար: Միթէ չէ՞ կարելի ասել, որ էթէ Մակար և Մուրադեան են պիտկոպոսներին են ընտրում, այդ նրա համար է որ նրանց ընտրողները պաշտօն և կաշառք են ակնկալում նրանցից, և այդ դէպքում ո՞րը ասելի ճիշդ էր լինի—այդ գիտէ ամեն մարդ: Բայց սրանց կարծիքով երբ Ներսէսեան են ընտրում, է, մենք ամեն սպասելի է, ամեն բան անկարգ է, բայց երբ իրանց առաջարկածին ընտրեն այն ժամանակը բոլորը կարգին կը լինի և ընտրաւթիւնը սուրբ:

8. Ասում են «Ազգային ժողովում երեսփոխաններին մի մեծ մասը Ներսէսին կաթողիկոս են ընտրում նրա համար, որ ազատվին այդ հրաժարեալ և ոչ հրաժարեալ պատրիարքից»։ Ազգային ժողովի երեսփոխանները այս զէպքում այդպէս կար-

Ներկումս վրայ բարդոդեալու ձեր քուէնեհն ալ նոյնը լինեն, անկարելի է որ մեր կողմէն տրտունջ մը լինի և դուք պէտք է այնքան իմաստուն լինիք որ ինքնատիւր ու է կերպով նորանոր դժուարութեանց զուտը չը բռնաւ. ձեր ձեռքն է ազգին բաղդը եւ ասպազան:

— Իրլանդական կուսակցությունը Միացեալ-Նահանգներում մի չըջաբերական ուղարկեց, որի մէջ հրաւիրում է իր կուսակիցներին ստորագրութիւն բանալ այն ծախսերը ծածկելու համար, որ լինելու են շուտով ընտրողական շրջանը սկսելու ժամանակ Այնքլայում: Այդ գովումներու մէջ լրագրի առաջնորդները դիտաւորութիւն են յայտնուէին: Բնական մի մասնաւոր զրամարկը, որը պէտք է ստգրութիւններ տայ ինքնավարութեան կուսակից կանգիդականներին ոչ թէ՛ միայն ներկայ ընդհանուր ընտրութիւնները ժամանակ, բայց նոյնպէս և բոլոր ապագայ ընտրութիւններին:

—«Journal des Débats» լրագրի խոսքերով, Սուալիիմյոյ հասած նորութիւնները աւելի և աւելի անհանդիստ ընաւորութիւն են ստանաւմ. թէպէտ քաղաքը պաշտպանւած է անդլիական թընդանթիթաճիկ նսւսերով, այնու ամենայնիւ, վտանգը մեծ է Օսման Վիզլան պարտատուութւն է յարձակւան համար: Նա այժմ զանվում է Գանձուկում, որպէս առաջնորդ բուրձ ապստամբներէ: Միւս կողմից Բէլքէրի զբաղիւնը յուսահատական է, և «Times» լրագրի ստացած հեռադրճներէց ելբւում է, որ Զօբէլը-Փաշան գններալ Քօրըճիկն օջնութիւն հասցնելու փոխանակ, միացաւ ապրտամբներէ հետ: Նպա ինտրիգներն պէտք է վերադարձի վերջին ապստամբութիւնները, որոնք ըսկվեցան Սուզանի հիւսիսում:

—Այրավազի միջոցով հրդեհ են վառվում բնակիչները, որ վարչապետի ֆոյեյալով Մալանկելիչ անունով 17 ամսեայ բանտը փորձ փորձեց և ռումբ զցեց ոստիկանութեան գլխաւորի դահլիճը, ուր պոլիցիայի բոլոր ծառայողները հաւաքուիլ էին մէկ հաշիւ լսելու համար: Ռումբը, չը հասնելով մինչև պատուհանը, ընկաւ գետին և ճայթեց: Այդ բանաւորը ծանր վիրաւորուեցաւ: Ոստիկանութեան չի-նտութեան 50 պատուհանները կտորատուած են: Մալանկելիչը կալանաւորուած է, նրա մօտ առոր-ճանակ գտնուեցաւ:

ԽԱՐԱԳԻՐ-ՀՐԱՄԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

որո մեր հրապարակախոսների պէս տգէտ չեն լինի, որ չիմանան թէ հրաժարվողն է պատրիարքը, հրաժարականի ընդունողն է Ազգային ժողովը, հրաժարական վաւերացնողն է Սուլթանը, որ Տաճարատանում միշտ կարող է իր քմաց համաձայն երկրի և Սահմանադրվեան օրէնքը ոտնակոխ անել, ուրեմն և պատրիարք հրաժարեցնել կամ հրաժարվածը վերահաստատել հակառակ նոյն իսկ պատրիարքի և Ազգ. ժողովի կամելի, լինի այդ պատրիարքը Ներսէսը, կամ վաղը մի ուրիշը, — բոլորը մէկ է։ Նշեն է երաշխաւոր, որ Ներսէսի հրաժարումից յետոյ Սուլթանը ըռնի կերպով պատրիարք չէ նշանակելու մի այնպիսի անձն, որը բոլորին հակառակ է լինելու ազգի կամելին և նրա շահերին, սակայն Կ. Պոլլս այդ նախազգուծ են այսօր։

9. Աստուծո՛ւն՝ «Աղգային և համազումար ժողով-
ներում՝ Ներսէսի հակառակորդները և թշնամիները
կամայալով հեռացնել նրան կ, Պոսիքի կաթողի-
կոսութեան համար նրան սպիտակ ջուէ կը տան»
Այդ չարամիտ ստախօսութիւն է՝ Ոչ ոք չի ուզի
իրան թշնամի՝ պատրիարքը կաթողիկոս ընտրելի,
այլ կամենայն ձիգ էր թափել նրան սպտորիարքու-
թիւնին էր գլորելու։ Հակամիտքեւեան անուա-
նարիկ կուսակցութեան՝ Ս. Գալիպզեան, Ն. Թիւլ-
պէնտեան և Հ. Աճաճեան երկսփոխանները,
ինչպէ՛ս նա և Գ. Ալէքսանճեան, Մատթ. Խովորեան և
Յովհ. Արշարունի եկեղեցականները ուրախութեամբ
կը համաձայնէն իրանց ձեռները փչրված տեսելի,
քան այս ձեռներով Ներսէս. պատր. կաթողիկո-
սացման համար սպիտակ քուէ տալ։ Այս պարզ
է և կարօտութիւն չունի բացառութեան, չը նա-
յած, որ Խովորեան եպիսկոպոսը պատրիարքա-
կան թեկնածու է, իսկ Ստեփան Գալիպզեանը
պատրիարքաբանութ՝ նշանաւոր դեր խաղալու տրա-
մադրի, որոնց արդեւքն է միմիայն Ներսէս պատ-
րիարքը։ Կամենա՞ք ապացոյցներ, ասն նրանք։

(Կը շարունակվի)

